Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ Բուժաշխատողի օրվա կապակցությամբ

21.06.2025

«Սիրելի բուժաշխատողներ,
Սրտանց շնորհավորում եմ ձեզ Բուժաշխատողի մասնագիտական տոնի՝ ձեր առաքելության արժևորման օրվա կապակցությամբ:
Ձեր նվիրվածությունը, մասնագիտական բարձր պատասխանատվությունը և մարդասիրությունը բացառիկ նշանակություն ունեն հասարակության առողջության պահպանման և բարելավման գործում: Դուք ոչ միայն բուժում եք, այլ նաև ուժ, հավատ և հույս եք ներշնչում հազարավոր մարդկանց՝ ամենադժվար պահին:
Առողջապահական համակարգի կայունությունն ու զարգացումը անհնար են առանց ձեր անփոխարինելի աշխատանքի: Հատուկ շնորհակալություն եմ հայտնում ձեզ վերջին տարիների ընթացքում՝ համաճարակների և ճգնաժամերի պայմաններում ցուցաբերած անսահման նվիրման և ուժեղ կամքի համար:
Ցանկանում եմ ձեզ քաջառողջություն, անսպառ եռանդ և նոր մասնագիտական հաջողություններ: Թող ձեր աշխատանքի գնահատականը լինի բուժված մարդկանց ժպիտը, հասարակության վստահությունն ու հարգանքը:
Շնորհակալություն ձեր ամենօրյա անձնուրաց ծառայության համար»: